



«Օգոստոսի 16-ի երեկոյան հրդեհի հիմնական օջախները արդեն վերացված էին, ինչին նպաստեց նաև տեղացած, թեկուզ ոչ հորդառատ անձրևը: Դեռ իրականացվում են աշխատանքներ, որովհետև կան ծխացող օջախներ, որոնք պետք է հիմնավոր վերացնել»- մեր թղթակցին ասաց Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը: Նրա խոսքով՝ ծխի օջախները տորֆային զանգված են պարունակում, բարձր ջերմաստիճանը պահպանվում է, այդ պատճառով մարդու կանխարգելիչ միջամտությունը յուրաքանչյուր օջախում պարտադիր է: Վնասի մասին խոսելիս, պետք է նկատի ունենալ, որ «պետական արգելոց» կարգավիճակը նշանակում է, որ կենսաբազմազանությունն այնտեղ թանկ է գնահատվում



Առաջիկայում կորուստները կվերականգնվեն, իսկ պետական կառույցները կլինեն տեխնիկապես առավել պատրաստ ու զգոն

պետության համար: Եթե այլ տարածքներում նման կորուստը մեկ միավոր է գնահատվում, ապա հատուկ պահպանվող տարածքներում այն նյութականի վերածած՝ բազմապատկվում է 5-ով: Գիտու պարագայում՝ կորստի առանձնահատկությունն այն է, որ այս ծառատեսակները դժվար աճող են, գրեթե անհնարին՝ վերականգնման տեսակետից և այս առումով, վնասի չափման միավոր գրեթե չկա: Մյուս կողմից գիտին իր կենսամիջավայրում հնարավորություն է տալիս առանձին կենդանատեսակների գոյությանը, ինչպիսին օրինակ, սև անգղն ու ընձառյուծն են, որոնք գրանցված է ՀՀ կենդանիների կարմիր գրքում

և ապրում է հենց այս կենսամիջավայրում: Դրա համար մեր երկրորդ կարևոր գործողությունն այն է եղել, որ Բնապահպանական պետական տեսչությանը հանձնարարվել է հսկողություն իրականացնել «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հարակից տարածքներում, այն որսահանդակներում, որտեղ կարող են տեղափոխվել այդ կենդանիները՝ որպեսզի որսի սահմանափակումներ կիրառենք և թույլ չտանք, որ այս աղետի հետևանքով լուրջ վնաս պատճառվի կենդանական աշխարհին:

• Առաջիկայում կորուսները կվերականգնվեն, իսկ ղեռական կառույցները կլինեն ռեզերվային առավել դասրաս ու զգոն

Սկիզբը էջ 1 /

Միջազգային կազմակերպություններից արդեն ունենք աջակցության առաջարկներ, վերականգնման շրջանակներում, հակահրդեհային միջոցառումներն առավել ուժեղացնելու, տեխնիկական զինվածությունն հզորացնելու առումով, և դա՝ միայն «խոսրովի անտառ» պետական արգելոցին չի վերաբերում, այլ բոլոր հատուկ պահպանվող տարածքներին: Մենք շատ չենք կարևորում այն ասեկոսները ըստ որոնց՝ հատուկ պահպանվող տարածքները միայն այս հրդեհից հետո են հսկողության տակ վերցվել, կամ այնտեղ ուժեղացված հսկողություն չի իրականացվել: Դա այդպես չէ, դեռևս սույն թվականի հուլիսի 17-ին իմ հրամանով բոլոր ԲՀՊՏ-ներում ուժեղացված ամենօրյա, ամենժամյա հսկողության համակարգ է սահմանվել, բոլոր սարքավորումները բերվել են առաջնակարգ պատրաստվածության վիճակի, որովհետև հրդեհի հավանականությունը շատ մեծ էր, պարզ էր, որ 42 աստիճանում հրդեհավտանգ վիճակը շատ ավելի է բարձրանալու: Մենք ամեն օր, յուրաքանչյուր տարածքի վերաբերյալ ստանում էինք տեղեկատվություն: Ավելին ասեն՝ ՀՀ կառավարության որոշմամբ՝ հունիսի 1-ից սեպտեմբերի 30-ն ամենաբարձր հրդեհային վիճակն է հայտարարվել, կառավարությունը շատ լավ գիտակցում էր, որ բոլոր կառույցները պետք է առաջնային պատրաստվածության վիճակում լինեն: Կարծիքներ են հնչում, թե պետք է «խոսրովի անտառ» պետական արգելոցում պահպանության ռեժիմ սահմանվի: Արգելոցը ինքը՝ ամենաբարձր և խիստ կարգի պահպանության ռեժիմ ունեցող է: Մենք, այդ ունենք որոշակի խնդիրներ, կան համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքներ, որոնք արգելոցի տարածքի ամբողջականությունը խաթարում են, և արդյունքում ունենում ենք շատ բարդ պատկեր: Գյուղացիներն այդ տարածքներում խոտհարքեր ունեն և այնտեղ հասնելու համար պետք է անցնեն արգելոցի միջով, սակայն արգելոցային ռեժիմում սահմանափակումներ կան: Կան նաև վիճելի տարածքներ, դրա համար մենք առաջիկայում շահագրգիռ կողմերի հետ ուզում ենք քննարկման առարկա դարձնել «խոսրովի անտառ» պետական արգելոցի կառավարման պլանի մշակումը, լիարժեք ամբողջացնենք այն: Մարդը պետք է ինչքան հնարավոր է քիչ հարաբերվի արգելոցի հետ, շահերի քիչ բախումներ լինեն համայնքների, մասնավոր հատվածի հետ: Արգելոցն ունի պահպանվող տա-

րածքի եվրոպական դիպլոմ, և այս առումով մենք պարտավորություն ունենք միջազգային հանրության առաջ ևս, և պատահական չէ, որ միջազգային հանրությունն էլ անընդհատ քայլեր է ձեռնարկում, որպեսզի ավելի ուժեղացնի պահպանումը և բարելավի վիճակը: Նկատենք նաև, որ կենդանիների ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով «խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքը՝ ողջ լայնությամբ համարվում է էկոմիջանցքի կարևոր մի հատված: Ուզում են շնորհակալություն հայտնել այն անհատներին, կազմակերպություններին, ովքեր այս օրերին ակտիվ, սրտացավ վերաբերմունք են ցուցաբերել աղետը կանխելու և հետևանքները հնարավորինս նվազեցնելու ուղղությամբ: Պարզ է, որ կարող էք ասել, որ այն արգելոցի աշխատակիցների պարտականությունն է, բայց դեպքերի ականատես եղանք, երբ աշխատակիցը գրկում և փորձում էր իր մարմնով փրկել ծառը: Շնորհակալություն են հայտնում նաև մեր հրամանատարներին, զինված ստորաբաժանումներին, մեր զորքերին, կամավորներին, ովքեր մեկ մարդու նման փայլուն աշխատանք կատարեցին այս օրերի ընթացքում և անգնահատելի ներդրում ունեցան մեր ժողովրդի, պետականության, ապագա սերունդների սեփականությունը պաշտպանելու գործում: Հրդեհի պատճառներն առաջիկայում քննությամբ կպարզվի: Չենք բացառում և ոչ մի վարկած, նաև՝ մարդկային գործոնը, քանի որ հրդեհը բռնկվել է այն հատվածում, որտեղ համայնքային և մասնավոր տարածքներից տեղաշարժը շատ է: Անդրադառնալով օդից հրդեհաշիջման աշխատանքներին՝ նախարար Արծվիկ Մինասյանը նշեց, որ նման լանդշաֆտի պայմաններում մարդկային ուժի կիրառումը շատ ցածր արդյունավետություն ուներ, դրա համար էլ անհրաժեշտություն առաջացավ օդից շիջման աշխատանքների իրականացման: Նախարարը կարևորել է հակահրդեհային տեխնիկական զինվածությունը և շեշտել, որ առաջիկա տարիներին խիստ հսկողական դիտարկումները կշարունակվեն, կմշակվի վերականգնման ծրագիր՝ ներգրավելով տեղական և միջազգային գործընկերներին և այնպես կարվի, որ առաջիկա տարիներին հնարավոր լինի ունենալ «խոսրովի անտառ» պետական արգելոցի հնարավորինս վերականգնված կենսաբազմազանության ամբողջական պատկերը:



«Խոսարովի անտառ» արգելոցի միջավայրը հրդեհի համար ռիսկային է ինքնին



ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի գլխավորությամբ նախարարության ստորաբաժանումների աշխատակիցները, հրդեհի վայրում գիշերային գործողությունից հետո օգոստոսի 15-ի լուսաբացից վերսկսել են հրդեհաշիջման աշխատանքները: Հրդեհի դեմ պայքարին մասնակցում են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարներ, ՀՀ ՊՆ Արարատի զորամասի զինծառայողներ, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության Արարատի մարզային վարչության աշխատակիցներ, կամավոր դեպքի վայր մեկնած բնապահպան ակտիվիստներ և քաղաքացիներ, Արարատի մարզի համայնքների բնակիչներ: Օգոստոսի 12-ից արգելոցում բռնկված հրդեհը մարելու ուղղությամբ աշխատանքները շարունակվում են մոր թափով, հրդեհի դեմ պայքարում էին ՀՀ բնապահպանության նախարարության 150 աշխատակից: Աշխատանքներին մեծապես խոչընդոտում են բարդ ռելիեֆը և դրան համապատասխան տեխնիկայի բացակայությունը: Օգոստոսի 15-ի առավոտյան աշխատանքներում ներգրավվել է նաև ՌԴ ԱԻՆ ինքնաթիռը: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հայտնել է, որ «Խոսարովի անտառ» պետական արգելոցում հրդեհը բռնկվելուց հետո շատ արագ է տարածվել, անմիջական գործողություններն արդյունքն չեն տվել թե՛

տեղանքի, թե՛ կլիմայական պայմանների առանձնահատկությամբ: «Մասնավորապես՝ լինելով պետական արգելոց, որտեղ օրենքի ուժով արգելված է որևէ գործողություն իրականացնելը (մասնավորապես խոտհունձը, հակահրդեհային բաժանարարների ապահովումը) ժամանակի ընթացքում այստեղ ձևավորվել է մի միջավայր, որը հրդեհի տեսանկյունից բարձր ռիսկային դաշտում է գտնվել: Թեև կանխարգելիչ բազմաթիվ գործողություններ են ձեռնարկվել, սակայն հրդեհից խուսափել չի հաջողվել, ինչի հետևանքով պետական արգելոցի տարածքում, ինչպես նաև համայնքային նշանակության տարածքներում հրդեհը բռնկվել և շատ արագ տարածվել: Հրդեհը լուրջ վնաս է հասցրել թե՛ բուսական աշխարհին՝ հարյուրամյա ծառերին, թե՛ կենդանական աշխարհին: Տարածքի առանձնահատկությունը նաև այն է, որ պետարգելոցը գտնվում է էկոմիջանցքում: Եղած մարդկային, տեխնիկական հնարավորությունների սահմաններում բոլոր գործողությունները ձեռնարկվել են, սակայն տեղանքի առանձնահատկությամբ պայմանավորված անհնարին է եղել կանգնեցնել հրդեհը: Կատարվում են հրդեհաշիջման աշխատանքներ օդային տարածքից, որից հետո կհանգցվեն նաև մնացած առավել փոքր օջախները»:

Կոչ բնակչությանը. Չվնասե՛լ թաքստոցներ փնտրող կենդանիներին

Օգոստոսի 12-ին «Խոսարովի անտառ» պետական արգելոցի, ինչպես նաև՝ մինչ այդ ՀՀ Վայոց ձորի մարզի Արտավան համայնքի հարակից տարածքներում բռնկված հրդեհների պատճառով տեղի վայրի կենդանիները և թռչունները տեղափոխվել են հարակից անվտանգ շրջաններ: ՀՀ բնապահպանության նախարարությունը կոչով դիմում է հանրապետության բնակչությանը՝ ցուցաբերել զգոնություն և զգուշություն և հորդորում չվնասել աղետի պատճառով անվտանգ վայրեր ու թաքստոցներ փնտրող կենդանիներին: Իսկ որսորդներին՝ օգոստոսի 26-ից սկսվող սիրողական որսաշրջանի ժամանակ զերծ մնալ ՀՀ Արարատի, Կոտայքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի մարզերի որսահանդակների բարձրադիր գոտիներում որս իրականացնելուց: ՀՀ բնապահպանության նախարարը նաև հանձնարարել է Բնապահպանական պետական տեսչությանը ուժեղացված հսկողություն սահմանել վերոհիշյալ շրջաններում՝ ուշադրության կենտրոնում պահելով կարմիր գրքում գրանցված կենդանիներին: Կոչ ենք անում խստորեն պահպանել նշված պահանջները և մեզ փոխանցել կենդանիների շարժի հետ կապված ձեր ունեցած հավաստի տեղեկատվությունը:

ՀՀ բնապահպանության նախարարություն

Կրակը թեք լանջերին էր, որին անգամ ամենագնաց մեքենայով մոտենալ հնարավոր չէր...

ArmLur.am-ի զրուցակիցն է «Վերելք» հիմնադրամի հիմնադիր, Բնապահպանության նախարարի խորհրդական Արծրուն Պեպանյանը, ով օգոստոսի 14-ին եղել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում, որտեղ արդեն մի քանի օր է, ինչ հրդեհ է բռնկվել:

-Պարոն Պեպանյան, եղե՞լ եք «Խոսրովի անտառ»-ում, այնտեղ ի՞նչ պատկեր եք տեսել:

-Եղել եմ «Խոսրովի անտառ» արգելոցում ամսի 14-ին: Բարդ իրավիճակ էր, կրակը թեք լանջերին էր, որին անգամ ամենագնաց մեքենայով մոտենալ հնարավոր չէր: Բնական ջուր չկար, մեր հետ ջուր էինք տանում, որ կրակ հանգցնենք: Ռելիեֆը բարդ էր և հրդեհի տարածման կանխարգելման միջոցառումներ անել հնարավոր չէր: Պարզ դարձավ, որ քամին կրակը տարածում է արագ ու մարդկային ուժերով դժվար է դեմն առնել:

-Իսկ ինչպե՞ս կգնահատեք մեր համապատասխան գերատեսչությունների աշխատանքը: Պարզվե՞ց՝ ՀՀ ԱԽ-ը չունի համապատասխան տեխնիկա:

-Լեռնային նման բարդ ռելիեֆը պահանջում է համապատասխան օդանավերի առկայություն, որը, ցավոք, մեր պետությունը չունի: Նման դեպքերում ընդունված է



Արծրուն Պեպանյանը՝ «Խոսրովի անտառ»-ի հրդեհի մասին

դիմել այլ երկրների օգնությանը: Ես կարող եմ մեր գերատեսչության մասին խոսել կոնկրետ «Խոսրովի անտառ» արգելոցում հնարավոր ամեն քայլ արված էր հրդեհի վտանգը նվազեցնելու ուղղությամբ, բայց բացառել ոչ ոք չի կարող:

-Իսկ ի վերջո, ի՞նչը կարող էր նման հրդեհի բռնկման պատճառ լինել: Մարդկային գործոնը բացառո՞ւմ եք:

-«Խոսրովի անտառ» արգելոցում միշտ գործում է խստացված ռեժիմ, մարդկանց մուտքը արգելված է այնտեղ, կան հենակետեր, այնինքն ամեն ինչ արվում է հրդեհային վտանգը նվազեցնելու համար: Բայց հրդեհը բացառել տեսականորեն հնարավոր չէ: Ամեն գործոն էլ հնարավոր է, դա մասնագետները կասեն: Բայց այս դեպքում մարդկային գործոնի դերը նվազում է խիստ ռեժիմի պատճառով:

զրուցեց Նաիրա Չովհաննիսյանը

Խոսրովի արգելոցում հիմնականում տուժել են չթռչող միջատները, սողունները և կրծողները.

Մարինե Կարամեյսյան



«Խոսրովի անտառ» պետական արգելոցի տնօրեն Հրաչյա Հովակիմյանը քիչ առաջ տեղեկացրել է, որ այս պահին անձրև չկա, օդային օպերացիաներից հետո և տեղացած անձրևը բավականին արդյունք տվել են: Այս մասին սոցցանցի իր էջում գրառում է կատարել ՀՀ բնապահպանության նախարարի խոսնակ Մարինե Կարամեյսյանը: Նա, մասնավորապես, գրել է. «Քիչ առաջ հաջողվեց կապ հաստատել Խոսրովի անտառ պետական արգելոցի տնօրեն Հրաչյա Հովակիմյանի հետ, ով տեղեկացրեց, որ այս պահին անձրև չկա, օդային օպերացիաներից հետո և տեղացած անձրևը բավականին արդյունք տվել են: Ներկայումս հրդեհաշիջման աշխատանքների բոլոր մասնակիցները կրկին գործի են անցել տեղայնացված հրդեհի օջախները մարելու նպատակով»: Ինչ վերաբերում է արգելոցի կենդանիներին և թռչուններին,

ապա Մարինե Կարամեյսյանը գրել է, որ ըստ ՀՀ ԲՆ Կենսառեսուրսների գործակալության բնության հատուկ պահպանվող տարածքների և դենդրոպարկերի կառավարման բաժնի պետ Արամ Աղասյանի՝ խոշոր կաթնասունները, թռչունները չեն տուժել և արգելոցի այլ տարածքներ են տեղափոխվել, հիմնականում չթռչող միջատները, սողունները, կրծողներն են տուժել հրդեհից. «Սրանք նախնական տվյալներն են, հիմնական ուսումնասիրությունները և հաշվարկները կկատարվեն արդեն հրդեհաշիջման աշխատանքների ամբողջական ավարտից հետո: Աղասյանը պարզաբանել է, որ հրդեհն ընդգրկած 2,5-3 հազար հա գոտում անգամ կան տարածքներ՝ ավազուտներ, կղզյակներ, որտեղ կենդանիները կարող էին պատսպարվել կրակից», - գրել է Մարինե Կարամեյսյանը:

« Խոսրովի անտառ» ՊՈԱԿ-ի հրդեհը ցույց տվեց, որ մենք անպատրաստ ենք նման աղետները դիմակայելու: Ինչո՞ւ ենք այդքան անպատրաստ՝ բնապահպան Կարինե Դանիելյանը, անդրադառնալով թեմային, շեշտել է, որ այս հարցը է անհանգստացնողը: Ինձ համար հասկանալի չէ, թե ինչո՞ւ մենք չունենք այն ավիացիան, որն անհրաժեշտ է այս պարագայում՝ նշել է Կարինե Դանիելյանը՝ հիշեցնելով, որ խորհրդային տարիներին Հայաստանն ունեցել է բավականին տարբեր նշանակության փոքր ավիա-



ցիա: Հրդեհի պատճառած կորուստների մասին խոսելը թեպետ վաղ է համարվում, սակայն, բնապահպանները հանդգնած են, որ անդառնալի կորուստները զգալի են լինելու: Ակնհայտ է, որ առհասարակ պատրաստ չենք այսօրվա այն էկոլոգիական վտանգներին ու ռիսկերին, որ գոյություն ունի ամբողջ մոլորակի վրա՝ ասում է բնապահպան Կարինե Դանիելյանը: Նրա խոսքով՝ տարիներ շարունակ ինքը առիթի դեպքում բարձրացրել է հարցը. «Ի՞նչ եղավ մեր փոքր ավիացիան, ինչո՞ւ մենք դա չենք օգտագործում նույն անտառապաշտպանության համար, գյուղատնտեսության մեջ, լիարժեք պատասխան չեն ստացել»: Վերջին հրդեհներն էլ ցույց տվեցին, որ այստեղ ակնհայտ բաց ունենք, շատ անելիք կա, նաեւ՝ էկոլոգիական մշակույթը զարգացնելու համար՝ հավելեց բնապահպանը: Անդրադառնալով խոսրովի անտառ արգելոցում հրդեհի պատճառած վնասներին՝ բնապահպան Կարինե Դանիելյանն ասաց, որ բավականին ժամանակ կպահանջվի՝ հասկանալու բուսական եւ կենդանական աշխարհին պատճառած վնասների իրական ծավալը: «Տեղեկություն եղավ, որ գիհիներն են այրվել: Եթե լրիվ են այրվել, Աստված մի արասցե, որ այդպես լինի, վերականգնումը շատ-շատ դժվար կլինի: Չեն կարծում, որ եղպես լինի: Իսկ բուսատեսակների կորուստները ավելի կարճ ժամանակում կարելի

Կա՞ն անդառնալի կորուստներ, թե՞ ոչ, դեռ վաղ է ասել

է զնահատել»: Կա՞ն անդառնալի կորուստներ, թե՞ ոչ, դեռ վաղ է ասել: Կարինե Դանիելյանի խոսքով, սակայն, եթե Կարմիր գրքում գրանցված տեսակների կորուստ արձանագրվի, որոնք միայն խոսրովի անտառում են աճում կամ ապրում, ապա՝ դա կնշանակի այդ տեսակների վերջնական ոչնչացում: Հայաստանի կանաչների միության նախագահ Հակոբ Սանասարյանը այրված տարածքների վերականգնումն ընդհանրապես երազանք է համարում: «Վերականգնման մասին հնարավոր չէ մտածել, այդ գոտում հարյուրավոր յուրահատուկ բուսատեսակներ կային, էնդեմիկ ծառեր: Կենդանական ու բուսական աշխարհի համակեցությունը վերականգնել հնարավոր չէ»: Բնապահպանության նախարարության աշխատակիցներն ու փորձագետներն այսօր նույնպես շարունակել են աշխատել խոսրովի արգելոցում: Գերատեսչության Բնության հատուկ պահպանվող տարածքների և դենդրոպարկերի կառավարման բաժնի պետ Արամ Աղասյանը տեղեկացրել է, որ անտառի բնակիչներին հրդեհը վնասել է մասամբ: Այս մասին մեզ հետ զրույցում փոխանցեց Բնապահպանության նախարարության մամուլի խոսնակ Մարինե Կարապետյանը: Ինչպես հայտնեց Բնապահպանության նախարարության Կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ Արամ Աղասյանը՝ անտառի բնակիչներին հրդեհը մասամբ է վնասել. խոշոր կաթնասունները կարողացել են փախչել եւ ապաստանել արգելոցի ապահով հատվածներում: Հիմնականում վնասվել են սողունները, կրծողներն ու միջատները: Վնասի վերջնական հստակ հաշվարկներ այս պահին չկան: Դրանք կլինեն առաջիկայում նախատեսվող վերջնական քարտեզագրումից ու չափագրումից հետո՝ ասաց Մարինե Կարապետյանը: Բնապահպան Հակոբ Սանասարյանի խոսքով՝ կենդանիների կորուստը պարզ կդառնա կենդանիների դիրքի քանակի ի հայտ գալուց հետո: Կանաչների միության նախագահը, մինչդեռ, կարծում է, որ լինելու է նաեւ հրդեհից փրկված կենդանիների միգրացիա, ինչը նույնպես կորուստ է:

Ռաֆիկուր

«Արևիկ» ազգային պարկում հակառակորդի կրակահերթից բռնկված հրդեհը մարվել է

«Ձանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիկ» մասնաճյուղի «Արևիկ» ազգային պարկի Ագարակի խաչից – «Կալպեկ ցուրտ աղբյուր» տարածքում օգոստոսի 14-ին՝ ժամը 15.30-ին, հակառակորդի արձակած կրա-

կահերթից հրդեհ է բռնկվել: Այն ընդգրկել է 1.0 հա խոտածածկ և թփածածկ տարածք: «Ձանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի աշխատակիցների և Կարճևան համայնքի բնակիչների ուժերով հրդեհը ժամը 19.55-ին մարվել է: Իրականացվում է շուրջօրյա խստացված հերթապահություն: Այս մասին տեղեկացնում է ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության կապերի վարչությունը: ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության ներքո գտնվող «Ձիկատար բնապահպանական կենտրոն», «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ների տարածքներում, «Արփի լիճ», «Դիլիջան», «Սևան» ազգային պարկերում օգոստոսի 14-ին հրդեհներ չեն գրանցվել: Իրականացվում է շուրջօրյա հերթապահություն:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՈՐՈՇ «ՀՐԴԵՀԱԳԵՏՆԵՐԻ» ՀԱՄԱՐ



ՀՀ ԲՆ ենթակայության ներքո գտնվող տարածքները բնության հատուկ պահպանվող տարածքներ են, որոնք արդեն իսկ հատուկ հսկողության ներքո են գտնվում:

Բայց հաշվի առնելով հանրապետության տարածքում առկա բարձր ջերմային ֆոնը և հրդեհավտանգ իրավիճակը, դեռևս 2017թ. հուլիսի 17-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը ստորագրել էր հրաման, համաձայն որի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն և կառավարում իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին հանձնարարվել է տարածքներում սահմանել շուրջօրյա հերթապահություն՝ հրդեհների բռնկումները կանխարգելելու նպատակով: ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող բոլոր հատուկ պահպանվող տարածքներն այդ հրամանից հետո անցել են աշխատանքի ուժեղացված ռեժիմի և սահմանված պարբերականությամբ նախարարության աշխատակազմ են փոխանցում հաղորդագրություններ՝ տարածքներում իրականացվող հակահրդեհային միջոցառումների և իրավիճակի վերաբերյալ: ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական հաղորդագրություններում (17.07.2017թ., 11.08.2017թ.) նաև կոչ է ուղղվել հանրապետության քաղաքացիներին՝ զգուշություն ցուցաբերել՝ զերծ մնալով անտառածածկ և խոտածածկ տարածքներում կրակ վառելուց, ինչպես նաև ցորենի հնձած դաշտերում խոտի խոզանների այրումից: Ինչ վերաբերում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցին, ապա այն մշտապես ունի օրենքով սահմանված պահպանման բարձր ռեժիմ, տարածք մուտք գործող բոլոր ճանապարհներին տեղակայված են ուղեփակոցներ, քաղաքացիների մուտքն արգելված է, իրականացվում է շուրջօրյա խիստ հսկողություն: ՀՀ բնապահպանության նախարարի 17.07.2017 թվականի համապատասխան հրամանից հետո այդ միջաջառումներն ուժեղացվել են:

Սակայն հրդեհի վտանգը բացարձակապես վերացնել հնարավոր չէ, քանի որ դրանց առաջացման պատճառները բազմաթիվ են. մարդածին, տեխնածին, օդերևութաբանական, կենսաբանական, օպտիկական: «Խոսրովի անտառ» պետական արգելոցի աշխատակիցները

12.08.2018 թ. հրդեհի բռնկման օջախը հայտնաբերել են ժամանակին, ահազանգել այդ մասին ու փորձել մարել այն: Սակայն ռելիեֆային բարդ տեղանքի պատճառով հնարավոր չի եղել արագ հասնել հրդեհի վայր, մյուս կողմից հրդեհին նպաստող առարկայական պայմանների (առատ խոտածածկ, չորացած խաշամ, ուժգին քամի և այլն) պատճառով հնարավոր չի եղել կանխել հրդեհի տարածումը: Հրդեհ մարելը բնապահպանության նախարարության գործառույթ չէ և նախարարությունը չունի անհրաժեշտ հնարավորություններ:

Այնուամենայնիվ, նախարարությունն իր կարողությունների սահմաններում մասնակցել է և շարունակում է մասնակցել կրակի մարման գործին: Հիմա հարց՝

-Ո՞րն է նախարարության թերացումը, որի համար ունանք պատասխանատվության կանչելու կոչ են անում:

ՀՀ ԲՆ բնության հատուկ պահպանվող տարածքներում իրավիճակը 16.08.2017 թվականի դրությամբ

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարար Ա. Մինասյանի 2017թ. հուլիսի 17-ի N 232-Ա հրամանի՝ համակարգի բնության հատուկ պահպանվող տարածքների տնօրեններին հանձնարարվել է սահմանել շուրջօրյա հերթապահություն և հակահրդեհային տեխնիկական միջոցները բերել առաջնային պատրաստվածության վիճակի: ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներից /բացառությամբ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի/ օգոստոսի 16-ին ստացված տեղեկատվությունների համաձայն, ժամը 12-ի դրությամբ հրդեհների բռնկման դեպքեր չեն գրանցվել, տարածքները գտնվում են շուրջօրյա խստացված հսկողության տակ, ձեռնարկվում են կանխարգելիչ միջոցառումներ, իրավիճակը վերահսկելի է: Գիշերվանից տարածքներում պարբերաբար անձրևներ են տեղում:

Ի՞նչ կարելի է որսալ, քանի՞ հատ եւ մինչեւ ե՞րբ

ՀՀ բնապահպանության առաջին փոխնախարար, նախարարի պաշտոնակատար Էրիկ Գրիգորյանը ստորագրել է ՀՀ որսահանդակներում որսի կենդանիների 2017-2018 թվականների սիրողական որսի համար թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները սահմանելու մասին հրամանը: Համաձայն հրամանի թույլատրվում է օգոստոսի 26-ից մինչև հոկտեմբերի 31-ը որսալ օրական յուրաքանչյուր որսի ժամանակ 8 հատից ոչ ավելի լոր, 4 հատից ոչ ավելի թխակապույտ և անտառային աղավճի, 4 հատից ոչ ավելի սև կեռնեխ և սինակեռնեխ: Սեպտեմբերի 2-ից մինչև 2018 թ. փետրվարի 28-ը

թույլատրվում է որսալ օրվա ընթացքում յուրաքանչյուր որսի ժամանակ 4 հատից ոչ ավելի կտցար՝ բացառությամբ ՀՀ Կարմիր գրքում գրվածների: 2 հատից ոչ ավելի բադ և ջրհովիվկներ: Թուլատրվում է որսալ նաև արտույտ, սարյակ, քարակաքավ, աղվես, մոխրագույն ագռավ, կաչաղակ, գայլ, շնագայլ:

Հայկական բնաշխարհի կենսաբազմազանությունը Բնության պետական թանգարանի Էկրանին

Ս.ք. հուլիսի 28-ին ՀՀ բնապահպանության նախարարության Հայաստանի բնության պետական թանգարանում տեղի է ունեցել «Կինոդիտում և քննարկում» խորագրով միջոցառումը: Միջոցառմանը մասնակցում էին «Փոքրիկ գիտակներ նախակրթարան»-ի սաները՝ Աննա Դեգոյանի գլխավորությամբ: Միջոցառման



ընթացքում կազմակերպվել է Հայաստանի կենսաբազմազանության մասին ֆիլմի ցուցադրում, որի ավարտից հետո ակտիվ քննարկում է ծավալվել նախակրթարանի սաների հետ: Միջոցառման ավարտին նախակրթարանի սաները շրջայց կատարեցին Հայաստանի բնության պետական թանգարանում, որտեղ երեխաները ծանոթացան ցուցանմուշների հետ: «Հայաստանի բնության պետական թանգարանում նմանատիպ կրթական միջոցառումները կրելու են շարունակական բնույթ», - իր խոսքում նշել է Հայաստանի բնության պետական թանգարանի տնօրեն Գայանե Ղազարյանը: Երեխաները թանգարանից հեռացան իրենց հետ տանելով Հայաստանի բնաշխարհի մասին գիտելիքներ:



Ուշագրավ փաստեր Բերդի «Սորաններ» դենդրոպարկի մասին

ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքի հարավային բարձունքում է գտնվում «Սորաններ» դենդրոպարկը, որը հիմնադրվել է 1962 թ-ին և զբաղեցնում է 62 հա տարածք: Ռելիեֆը լեռնամարգագետնային է, կլիման՝ բարեխառն, այն ծովի մակարդակից բարձր է մոտ 1200-1300 մ (Բերդ քաղաքը գտնվում է օ.մ. 900 մ բաժնություն վրա): Երևանից մինչև Բերդ հեռավորությունը 202 կմ է:

ընտանիքի 73 ցեղի պատկանող 140 ծառափատեսակներից (ըստ 2016 թ.-ի գիտական ուսումնասիրությունների և ցուցակների լրամշակման արդյունքներով ստացված տվյալների): Դենդրոպարկում առկա տեսակները արդյունք են տասնամյակների ընթացքում կատարված բազմաթիվ ծառափատեսակների կլիմայավարժեցման: Դենդրոպարկի բնակլիմայական պայմաններին լավ են հարմարվել գեղազարդիչ, բարձրարժեք, մշտադալար շատ այլ տեսակներ:

Դենդրոպարկը ունի ստրատեգիական մեծ նշանակություն, այն գտնվելով բարձունքում և ամբողջապես ծածկված լինելով ծառերով, կարծես հարավից կենդանի վահան լինի քաղաքի համար:

Դենդրոպարկի դենդրոֆլորան կազմված է շուրջ 30

շարունակությունը էջ 8 /

• Ուճագրավ փաստեր Բերդի «Սորաններ» դենդրոդարկի մասին

Սկիզբը էջ 71

Այդ առումով՝ դենդրոպարկը շատ կարևոր դեր է ունեցել թե 90-ական թվականներին, և թե 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին: Հաշվի առնելով այս համագամանքը «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի մասնագետների առաջարկով, «Սորաններ» դենդրոպարկում աճեցնում են բարձր ծառատեսակներ, օրինակ՝ թույաար և մտյանձև սյունանման (thujaoccidentalisf.fastigiataJaeg), սոճի սովորական (pinussilvestris L.), սոճի դրինյան (pinuspallasiana Lamb.), գիհի սովորական ձև՝ սյունանման կամ իռլանդական (juniperuscommunisf.hibernica), կաղամախի կամ բարդի անտառային (populustremula), Բարդի նրբագեղ (populusgracilisAcrossh) և այլն:

Դենդրոպարկը հիմնադրել է անտառագետ-ինժեներ Յրանտ Ավագյանը, ով մեծ ավանդ է ունեցել հանրապետության տարածքի անտառապատման, անտառների վերականգնման, նրանց պահպանման գործում: Յրանտ Ավագյանը ծնվել է 1922 թ.-ին, Շամշադինի շրջանի Նորաշեն գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, ապա ընդունվել է Երևանի կոոպերատիվ տեխնիկումը, որն ավարտել է 1940 թ. և մեկնել սովետական բանակ, ուր ծառայել է հատուկ հեծյալ կորպուսում: Մասնակցել է երկրորդ համաշխարհային պատերազմին, երեք անգամ վիրավորվել է և 1943 թ.-ի վերջին՝ ծանր վերք ստանալու պատճառով, զորացրվել է: 1971 թ. նա նշանակվել է Հայկական ՍՍՀ անտառային տնտեսության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, իսկ 1974 թվականից շուրջ 10 տարի եղել է կոմիտեի նախագահը: Կյանքի վերջին տարիներին նա ղեկավարել է Հայանտառ գիտաարտադրական միավորումը, Ջրվեժի անտառապարկային տնտեսությունը: Ի դեպ, այս տնտեսության հիմնադիրը նույնպես Յրանտ Ավագյանն է:

Բերդի «Սորաններ» դենդրոպարկը համարվում է Բերդ քաղաքի, ինչպես նաև՝ մերձակա բնակավայրերի միակ զբոսաշրջային և ժամանցային վայրը: Դենդրոպարկը համարվում է նաև մշակութային կենտրոն, որովհետև նրա հարևանությամբ է գտնվում քաղաքի միակ պատմամշակութային կենցաղի թանգարանը: Այստեղ տարվա տաք ամիսներին տեղի են ունենում էկոտուրիստական, ճանաչողական և ժամանցային այցեր, կազմակերպվում են տարբեր սպորտային միջոցառումներ դպրոցահասակ երեխաների համար, գործում է նաև խաղահրապարակը: Դենդրոպարկի սկզբնամասում կանգնած է Հովհաննես Բաղրամյանի տնկած ծառը՝ «Այս ծառը 1976 թվականի հոկտեմբերի 1-ին տնկել է ԽՍՀՄ կրկնակի հերոս, մարշալ Հովհաննես Բաղրամյանը» գրությամբ:

Նախարարության Արգելոցապարկային համալիրի անմիջական մասնակցությամբ և կազմակերպիչ կողմերի նախաձեռնությամբ, սկսած 2012 թ.-ից Տավուշի մարզի

Բերդ քաղաքում օգոստոս ամսին մշվում է Շամշադինի մեղրի և բերքի փառատոնը: Տարեց տարի մասնակիցների թիվն ավելանում է, որովհետև փառատոնի մասնակիցները ներկայացնում են շամշադինյան մեղրը և հատապտուղները՝ դրանցից պատրաստվող տարատեսակ օգտակար սննդամթերքների հետ միասին: Մեղրի և բերքի փառատոնը նպատակ ունի խթանել տարածաշրջանում նախատեսվող ծրագրերի իրականացումը, շեշտել տեղանքի նշանակությունը որպես մեղրի և հատապտուղների արտադրության կենտրոն, ինչպես նաև՝ նպաստել տուրիզմի և տեղական համայնքներում տուրիստական ենթակառուցվածքների զարգացմանը: Բերքի փառատոնին տեղի է ունենում նաև խաղօրհներ, իսկ վերջում՝ տոնական համերգ:

«Սորաններ»-ում է գտնվում նաև Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը, որտեղ ամեն տարի, յուրաքանչյուր տեղացի՝ մեծ թե փոքր, իր հարգանքի տուրքն է մատուցում անմեղ նահատակների հիշատակին:

Հուշարձանի մոտ է գտնվում չափսերով մեծ հղկված քարերով, բայց և բուսականությամբ գրեթե ծածկված մի շինություն, որը նման է պատի, այն մարդածին է, և ըստ տեղացիների՝ հասակակիցն է Տավուշ բերդին:

Տավուշ բերդը կառուցվել է դեռևս վաղա միջնադարում, Սեպուհ Ցլիկ Ամրամի ժամանակներում (7 դար), Տավուշի կիրճի դժվարամատչելի լանջերում:

Տավուշի բերդը, կամ ինչպես այլ կերպ անվանում են՝ Ցլիկ Ամրամի բերդը, միջնադարյան շինություն է Բերդ քաղաքի ծայրամասում, Տավուշ գետի աջ ափին, պատմական Մեծ Հայքի Ուտիք նահանգի Տավուշ գավառում:

Տավուշ բերդը առաջին անգամ հիշատակվում է 10-րդ դարի սկզբից որպես Աշոտ Երկաթի փոխարքաների նստավայր (հիմնականում Ցլիկ Ամրամի): 10-11-դարերում ամրոցը անցել է լոռեցի Կյուրիկյաններին: Ամրոցի տարածքում այսօր էլ կան կավից պատրաստված սպասք և ուրիշ իրերեն ապացույցներ, որոնք փաստում են դրանց մշակած ժամանակաշրջանին պատկանելու փաստը: Վերոնշյալ պատմական պատից դեպի հյուսիս գառիթափ լանջի մերկացած ապարների վրա է գտնվում մի մեծ ոտնահետք, որը թվագրվում է նախամարդու ժամանակաշրջանին ինչը պատմական և հնեաբանական նշանակություն ունեցող լուրջ արժեք է: «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի աշխատակիցները մշտապես և աջակցություն հետևում են դենդրոպարկի խնամքին և պահպանությանը, իսկ բարձր որակավորմամբ մասնագետները այստեղ իրականացնում են գիտական լուրջ ուսումնասիրություններ:

Ղյուրթը պատրաստեց
Ս. Խալաթյանը

Նախագիծը՝ Արծրուն Պեղանյանի
խմբագիր՝ Սանվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517